

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Գ.Ս.ԴԱՎԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԻՂՈՒԹՅԱՆ
ՊՐՈԲԼԵՄՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Երևան 0082, Նորագյուղ 108,
հեռ.՝ 56-51-62, 56-30-15
Է-փոստ՝ hydropinstitute@gmail.com
Հասցեն Ինտերնետում՝ www.sci.am



NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
G.S.DAVTYAN INSTITUTE OF
HYDROPONICS PROBLEMS

Noragyugh 108, Yerevan 0082
phone: (374-10) 56-51-62, 56-30-15
e-mail: hydropinstitute@gmail.com
<http://www.sci.am>

N2462-5/60

“ 23 ” հոկտեմբերի 2024թ.

«ՍԹԱՐ-ԼԱԲ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Մ.Բալայանին

Ծանուցում Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի գործընկեր

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԳԱԱ «Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և «ՍԹԱՐ-ԼԱԲ» ՍՊԸ-ի միջև 2024թ. հուլիսի 26-ին կնքված N ՀՊԻ-ԳՀԱՊՁԲ-24/1-1 պայմանագրի և 2024թ. սեպտեմբերի 9-ին կնքված N 1 համաձայնագրի շրջանակներում ապրանքի մատակարարման վերջնական ժամկետ է սահմանվել 12.10.2024թ.:

«ՍԹԱՐ-ԼԱԲ» ՍՊԸ-ն ժամանակին չի կարողացել կատարել պայմանագրի 1-ին չափաբաժնով ստանձնած պարտավորությունները՝ արտադրողի (Bipbase Biomed CO., LTD) կողմից ապրանքի արտադրության ուշացման պատճառով: Վաճառողը չի հրաժարվում պայմանագրով նախատեսված տույժերն ու տուգանքները վճարելով ուշացած մատակարարել ապրանքը և Պատվիրատուի մոտ պահանջը չի վերացել, սակայն ՀՀ ԳԱԱ «Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը հոկտեմբերի 12-ից հետո չի կարող վճարել ապրանքի դիմաց, քանի որ գումարը վերադարձվելու է պետական բյուջե՝ գիտական թեմայի ավարտի հետ կապված:

Հիմք ընդունելով վերը նշվածը ՀՀ ԳԱԱ «Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է, որ «ՍԹԱՐ-ԼԱԲ» ՍՊԸ միջև 2024թ. հուլիսի 26-ին կնքված N ՀՊԻ-ԳՀԱՊՁԲ-24/1-1 պայմանագիրը 21.10.2024թ.-ին մասնակի միակողմանի լուծել է՝ 1-ին չափաբաժնի մասով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-ն որոշման 7-րդ գլխի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և պայմանագրի 8.9 կետը:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ պայմանագրի մասնակի լուծման մասին ծանուցումը հրապարակվելու է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում և Ձեր կազմակերպությունը համարվում է պատշաճ ծանուցված :

ՀՀ ԳԱԱ «Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի
պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խ.Մայրապետյան

կատարող՝ Ա.Թադևոսյան